երկիւղ կրելով, որովհետև նրա հակառակորդը, փորձում էր սահմանափակել Մայր Աթոռի իրաւունքները, ինչպէս գրում էր Ղուկաս կաթողիկոսը Զաքարիայի մասին, և աշխատում էր «զանխոնարհելի իշխանութիւն սրբոյ Աթոռոյս արկանել ի ներքոյ ստորագրելոց իւրոց»։ Սրբազնագոյն Ղուկասն իւր կոնդակի մէջ ի 15 դեկտեմբերի 1780 ամի, որ ուղղուած էր Կ. Պոլիս, անկեղծաբար յայտարարում է, թէ նա պարտք համարեց ընդունել ընտրութիւնն աչքի առաջ ունենալով հայրապետական Աթոռի օգուտը և թէ ինքն արդար և ծանր մեղադրանքի կենթարկուէր, եթէ մերժէր այդ ընտրութիւնը։ Ապա թէ Կ. Պոլսի պատրիարքի բողոքը մի վիրաւորուած անձնասիրութեան վերագրելով, հայրապետը քրիստոնէական հեզութեամբ յօժարութիւն է ցոյց տալիս նրան թողնել իւր տեղն և յետ քաշուիլ իբրև մի սոսկ արեղայ, եթէ տաճկահայոց ընտրութիւնը Զաքարիայի վրայ կայանայ։ Ղուկաս կաթողիկոսը՝ ամբուլջ ժամանակ, մինչ իւր ընտրուելու առթիւ թղթակցութեան մէջ էր Զաքարիայի հետ, ձեռնպահ էր մնում որ և է կարգադրութիւն անելուց, որպէս կաթողիկոս, և նոյն իսկ Էջմիածնի մայր տաճարի հայրապետական Աթոռի վրայ չէր նստում։ Նրա կոնդակների մեջ հասած ժողովածուի մէջ յառաջ են գալիս պատմութեան արժանի տողեր, ուր տպաւորուած են նրա խոնարհութիւնը, բարեպաշտութիւնը, կորովի միտքը, անձնուիրութիւնը Մայր Աթոռին և այն խորին վիշտը, որ մաշում էր նրան, երբ փորձում էին աղաւաղել այդ Աթոռի իրաւունքներն և կամ զլանում արժանաւոր յարգանք ընծայել նրա հովանաւորութեան։ Կ. Պոլսի ռուսաց դեսպան Թամարան իւր զեկուցագրի մէջ 30 մայիսի 1801 ամի գրում է. «Ղուկաս կաթողիկոսը, որին անձամբ ճանաչել եմ, հայոց վարչական գործերում պատուական յատկութիւններ ցոյց տուող մարդ է, և նրա նուիրական, թէև համեստ, բայց լուսամիտ փափագն է վերականգնել իւր ազգը Ռուսաստանի օգնութեամբ, երբ որ վերջինիս հանգամանքներն ու վիճակը յոյս տան իւր հովանաւորութեան դիմելու յօգուտ, այլ ոչ 'ի կորուստ հայ ազգի»։

Սրբազնագոյն Ղուկասի այդ դժուար կացութեան վախճան դրին Կ. Պոլսի հայ ժողովրդի ներկայացուցիչները, որոնք երկիւղածութիւն և որդիական հաւատարմութիւն զգալով դէպի Էջմիածինը, յաջողացրին պաշտօնանկ անել Զաքարիա պատրիարքին. այնուհետև նրա յաջորդը, որը պառակտման ա-

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան